ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ — ՆԻՒ ԵՈՐՔ, ՕԳՈՍՏՈՍ 1, 1894 — ԹԻՒ 11

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. — New York, N. Y. — Vol. IV, 1894

ՌՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աշըգեանի Անկումն.— Մերձ է Վախճանն Թրքաց պետութեան.— Նամակ Բանտարկելոյն. Թուրքիոյ Փտութիւնն.— Մատենախօսական. ՊԱՊԻԿ և ԹՈՌՆԻԿ.— Խրիմեան Հայրիկ Յաչս օտարազգեաց.— Նամակ Կ. Պոլսէ. Մեր Վիճակն.— Նամակ Սուրապայայէն.—Հայկական Խնդիրն. Բ. ի Ռուսիա.— Տեղեկաւ և այլ և այլ Լուրեր։

ՀԱՅԿԻ Նոր հասցէն է
139 West 22nd St. New York

ԱՇԸԳԵԱՆԻ ԱՆԿՈՒՄՆ

ԶՈՎ ՊԷՏՔ Է ԸՆՏՐԵԼ ՊԱՏՐԻԱՐՔ

Աշըգեան Սրբազանի անկումն հազիւ կ'արժէ անկում կոչել. Նա ի բաց սողաց Պատրիարքական գահէն՝ ատրճանակի մի անբարբառ թոթովումէն աւելի՛ զարհուրելով քան զոռ մրապետին հրամանէն։

Ազգն շնորհաւորութեան արժանի է որ իւր ապիկար և երկչոտ Պատրիարքին ձեռքէն վերջապէս կրցաւ պրծիլ յետ այնքան բազմակրկնակ ջանից։ Այլ մեծագոյն մխիթարութեան պատճառ կ'ունենայ եթէ յաջողի ընտրել արժանաւոր պատրիարք մի։

Ներկայ պարագայից մէջ պէտք է ծանրագլուխ, արիասիրտ, փորձառու, կեցցաղագէտ եկեղեցական մի ընտրել պատրիարքական փափուկ պաշտօնին. և ըստ մեզ, Եղեսիոյ Ս. առաջնորդ Խորէն եպ. Մխիթարեան է ճիշդ այդպիսի ոք, որ պատրիարքական փոխանորդի պաշտօն վարած է և կարող է Դրան հետ վարուիլ առանց արհամարհելի ստորութեան ինչպէս և առանց զրգռիչ յանդգնութեան

Ռուսիա բնական պաշտպանն է Հայոց։ Սովահար և հալածուած հայ գիւղացիք Ալաշկերտէն և Մշոյ դաշտէն դիմեցին դէպ ի Ռուսիա անցեալ հոկտեմբերէն սկսեալ։ Հոն գտան գոյութեան երկու պայմաններ որոնցմէ զուրկ էին իրենց հողի վերայ. գտան կանոնաւոր կառավարութեան մի հովանի փոխանակ մահմետական խժդժութեան. գտան նաև հաց և ապաստանարան իրենց հայ եղբարց յսրկերուն տակ։ Գիւղացւոյ այս գաղթումն գործնական քուէարկութիւն մի կ'արժէ ի նպաստ ռուսական տիրապետութեան։ Զուտառական գաղթմամբ Ռուսիոյ հովանւոյն ապաստանող Հայերն ո՞րքան զոհ պիտի լինին եթէ Ռուսն գայ տիրէ իրենց երկրին և թոյլ տայ վայելել իրենց հողագործութեան արդասիքն։

Սքանչելի է ռուսահայոց ազգասիրական գութն դէպ իրենց գաղթական եղբայրներն, զորս զրկաբաց ընդունեցին և ամիսներով իրենց սաղմանակից և բնակակից արին։ Փափուկ և դժուարին պարտք մի կը մնայ սակայն, այն է գաղթականներն ետ դարձուցել իրենց բնավայրն և հոն ցանելու սերմն հայթայթել։ Ցուսամք թէ ռուսահայոց իմաստուն հայրենասիրութիւնն պիտի քաւէ և առ այդ։

Շնորհակալութեամբ ստացանք հետևեալ նուիրատուութիւնք ի նպաստ 'Հայկ'ի.—ի Մեծ. Տ. Օ Քիւրքճեանէ, ծովային Սուրապայայ քաղաքէն, 5 անգլ. ոսկի. ի Մեծ. Տ. Յ. Խսկէնտէրէ Բարիզէն, 14 տոլար. զոր հաճած է յղել յանուն Հնդկաբնակ հայրենասիրի մի որոյ անունն մեզ անծանօթ կը մնայ։ ի Մեծ. Տ. Շուշանէ Ուստրբէն, 2 տոլար։ ի միոյ հայրենասիրէ. Մանչէսթրբէն, 10 տոլար։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

ԲԱՆՏԱՐԿԵԼՈՑՆ ՆԱՄԱԿԻՆ ԱՌԹԻՒ

ՄԵՐՁ Է ՎԱԽՃԱՆԸ ԹՐՔԱՑ ՊԵՏՈՒԹԵԱՆ

Բանտարկելոյն նամակն զորոյ վերջին մասն կը հրատարակեմք ներկայ թուով՝ լոյս կը սփռէ Թուրքիոյ ծածկագոյն վէրքերուն վերայ և նորա մահամերձ վիճակը կը պարզէ մեզ։ Կ'արժէ որ այդ կարեւոր և կատարելապէս վստահելի նամակին ճիշդ տեղեկութեանց վերայ մի քանի խորհրդածութիւն անեմք։

Ա. Մեք Հայքս մեր ցաւերով զբաղած՝ ընդհանրապէս կը մոռնամք թէ նոյն իսկ Թուրքք ևս չարաչար կը նեղուին իրենց գեղծ կառավարութեան ձեռքէն։ Բուն Թուրք ցեղն չէ Օսմանեան Պետութեան մէջ նուագագոյն հարստահարութիւն կրողը՝ այլ Քիւրդն, և այդ՝ չնորհիւ իւր ամուր լերանց և թափառիկ կենցաղին։ Բուն Թուրքն, իբրեւ մահմետական և բաղդահաւատ, ուելի համբերող է և կրաւորական տրամադրութեամբ կը կրէ իւր կառավարութեան հարուածներն։ Գիւղացի և գաւառաբնակ Թուրքք տեսակ մի ապշութեամբ, հոգեւոր թմրութեամբ բռնուած՝ չեն կրնար հասկանալ թէ ինչ է իրենց աղէտից բնութիւնն և աղբիւրն։ Իրաց վիճակն փոխելու, ոևէ բարեփոխութեան փորձ փորձելու ոչ թէ քաջութիւնն այլ աղօտ խորհուրդն անգամ չունին; ա՛նքան տգէտ և խեղճ են։ Եթէ լուսամիտ Թուրք երիտասարդութիւն գտնուէր ի գաւառս, կարող կը լինէր 10 տարուան մէջ ահագին յեղափոխութիւն մի թխսել պատրաստել Թրքաց մէջ ընդդէմ գեղծ վարչութեան։ Դժբաղդաբար Թուրքք կրթութեան մասին շատ յետնեալ են դեռ։ Հայ երիտասարդաց և առաջնորդ գործիչներու կը մնայ Թուրքն ի յեղափոխութիւն մղել, բայց այդ ալ կը բօնական խորութեան պատճառաւ կը դժուարանայ և մերայնոց անփորձութեան երեսէն ալ վտանգաբեր և անիրագործելի կը լինի։

Թուրք ժողովրդային զանգուածին խորին տգիտութեան կը հաւասարի պաշտօնական մարմնոյն խորին վատթարութիւնը։ Ոստիկանութիւն, դատաստան, օրէնք, միջոց են գողութեան։ Գոհ չլինելով օրէնքներն չարաչար գործածելէ, օրէնքէ դուրս հազար առիթ կը գտնեն մարդ կողոպտելու։ Կը ստիպեն որ ուղեւորն հաստատէ թէ կինն իւր կինն է, թէ ձին իւր ձին է. և եթէ վկայք ներկայանան և հաստատեն, պաշտօնեայք կը բարկանան։ Պէտք է որ մարդիկ բանտարկուին, որպէս զի կաշառք տան—շատ տան եթէ մեղաւոր են, քիչ տան եթէ անմեղ ելնեն. բայց յամենայն դէպս տան, և աւելի լաւ է որ մեղաւոր ճանչուին ու շատ տան, քան անմեղութիւնն երեւի և քիչ տան։

Այս սկզբան համաձայն չարժելով է որ յանցաւորք ալ անմեղներու պէս կ'արձակուին շուտով երբ պահանջուած մեծագոյն գումարն վճարեն։ Կաշառք տալ կը բաւէ, ոճրի համար ուրիշ պատիժ չկայ։ Եւ աւելի սոսկալի հետեւանք մ'ալ այն է, որ կաշառքի պայմանական գումարն վճարող յանցաւոր պաշտօնեայն ոչ թէ միայն կ'ազատի բանտէն այլ և նորէն իւր պաշտօնի գլուխ կ'անցնի։ Ստոյգ աղբիւրէ դիտեմք թէ այս ինչ քաղաքի ոստիկանապետն հայու մի ջանիւք կուսակալութեան կեդրոնն տարուեցաւ, և իւր բիւր անիրաւութիւնք հաստատուեցան, բայց կաշառք տալով բանտէն արձակուեցաւ և ուղղակի վերադարձաւ իւր առաջին պաշտօնն առաջին եղանակաւ վարելու։

Բ. Թուրքիոյ տնտեսական և քարոյական անկումն այսքան խորը լինելով՝ կարելի չէ որ պետութիւնն այլ ևս երկար ատեն կանգուն մնայ։ Ամենօրեայ դիտողութեան զարմանալի առարկաներէն մին այն է թէ մարդիկ չնչին, աննշան պատճառաւ, 10—20 դահեկանի պահանջ մի վճարել չկարենալով, 10—20 աւուր բանտարկութիւն կը կրեն։ Զքաւորութիւնն հասած է աննկարագրելի աստիճանի։ Եւ այս մասին դիտելու կարեւոր բանն այն է որ գաւառներն աւելի աղքատացած են քան զմայրաքաղաքն, փոքր քաղաքներն աւելի քան զմեծերն, և գիւղացի ժողովուրդն առաւել քան զամենայն։ Գիւղացին ծանր պարտքի տակ ինկած է. շատերն կորուսանելով իրենց հողն կամ չկարենալով տուրքերն վճարելու դրամ գտնել, կը թողուն կերթան քաղաք իբրեւ բան-

ւոր կամ մուրացկան։ Փոքր քաղաքներու ընտանիքներ ալ կան որք տեսնելով թէ առևտուր և շահ և գանձուն ամ քան զամ կը դժուարանան, կը խորհին դաղթել երթալ մեծ քաղաք մի հասատուիլ։ Այսպէս ընդհանուր կեդրոնաձիգ շարժում մի կայ որ զպետութիւնն քայքայելու կը ծառայէ, գիւղն ու աւանն չորցունելով, ամայացունելով և դէպ ի մեծագոյն քաղաքներն ու դէպ ի Կ. Պոլիս մղելով դեռ մրցելու կամք ունեցողներն։ Այս շարժման արդիւնքն կրկին կը լինի. գիւղերն ամայացունել և մեծ քաղաքներու մէջ մնացած նուազագոյն շահու միջոցներն սասակ մրցման ենթարկելով՝ անրաւականութիւնն անտանելի դործել բովանդակ երկրին մէջ։

Գիւղն է երկրին շահուց աղբիւրն, բոլոր վաճառական շարժման սկզբնակետն, բոլոր քաղաքական շինուածին հիմն. քանի որ Թուրքիոյ մէջ գիւղական կեանքն այս անմխիթար և անհանդուրժելի կացութեան հասած է, ասել է թէ երկրին կենաց աղբիւրն ցամաքելու վերայ է, հիմն քանդուիլ սկսած է, և ուրեմն գիւղին հետ փոքր քաղաքն և դաւառներուն եռեւէն մայրաքաղաքն՝ բնական օրինաց բերմամբ՝ պիտի կործանին շուտով։

Եթէ հին բարի ժամանակներն լինէր, Թուրքիա վաղուց օսմանցւոց ձեռքէն ելած կը լինէր։ Երկիր մի որ այդքան տարրացած է, որոյ այդքան ագէտ և թմրած է ժողովուրդն և որոյ այն սոսիճան անգութ և անիրաւ է պաշտօնէութիւնն, հզօրագոյն դրացւոյ մէկ հարուածովն անձնատուր պիտի լինէր և այսպէսով չարշարեալ հասարակութիւնն պիտի փրկուէր։ Բայց Եւրոպիոյ մէջ այժմ այնպիսի անսովոր միջազգային վիճակ մի կը տիրէ որ չէ թողուր Թուրքիոյ կառավարութիւնն ընդունի մահացու հարուածն և ժողովուրդն փրկուի։

Այդ պատճառաւ ահա չափազանց երկարեցաւ «Հիւանդ Մարդուն» կեանքն. բայց ամեն բան ունի իւր չափ ու սահման. և ոչ ինչ կրնայ Օսմանցւոց պետութիւնն անկումէ պահպանել դեռ երկար տարիներ։ Մերձ է վախճանն։

Երանի՜ թէ Թրքահայ ժողովուրդն կրթութեամբ և ամեն կերպով պատրաստ գտնուի օգտուելու այն օր երբ այդ բաղձալի վախճանն պիտի ողջունէ։

ՆԵՄԱՆԿ ԲԱՆՏԱՐԿԵԼՈՅՆ

ԹՈՒՐՔԻՈՑ ՓՏՈՒԹԻՒՆ

(Շար. և վերջ, տես նախորդ թիւն)

Իմ բանտարկութեան մի քանի շաբաթներուն մէջ ա՛նքան տարօրինակ բաներ տեսայ որ չգիտեմ թէ ո՞րն պատմեմ և ո՞րն լռեմ։

Երեկոյ մի ուշ ատեն երիտասարդ մի նետեցին մեր բանտն. ինձ թուեցաւ թէ հայ էր. մօտեցայ և հետաքրքիր եղայ։ Ահա պատմութիւնն։ Ինքն ձիով եկած էր յԵդեսիայէ, և ի քաղաք հասած էր երեկոյին, մութին։ Ոստիկանք բռնած էին զինքն և պահանջած որ ապացուցանէ թէ ձին իւրն է և ոչ գողցուած։ Օտարականը ի՞նչ ասէր, ի՞նչպէս հաստատէր։ Կաչառք տալով ազատեց ինքզինք և իւր ձին։

Քան զայս աւելի զուարճալին ալ պատահեցաւ։ Զինկեանէներն գիտէք ինչ ցեղ են։ Օր մի անոնցմէ մին գտանք մեզ բանտակից։ Սա գիշեր ատեն իւր կնիկով հանդերձ ի քաղաք հասած էր, և ոստիկանք պահանջած էին որ ապացուցանէ թէ կինն իւր կինն է...։ Մինչև ցհաստատելն, զինքն ի բանտի, և զկինն ալ իմամին տան մէջ փակեցին։ Հետեւեալ օրն իւր ցեղակիցներէն ոմանք ներկայացան դատարանին և վկայեցին թէ բանտարկեալն կը ճանաչէին լինիլ այս անուն անձ, և կինն իւր ճշմարիտ կին։ «Դուք սո՛ւտ կը խօսիք դաշեց դատաւորն, կորսուեցէ՛ք»։ Բանտարկեալն ի վերջոյ կաչառք վճարելով ազատ արձակուեցաւ։

Վագըֆի տրոց պատճառաւ բանտարկեալ Թուրք մի ևս մասնաւորապէս ուշադրութիւնս գրաւեց։ Գիտէք թէ վագըֆ կը կոչուին այն կալուածներ, տուն, արտ, ևն. զորս բարեպաշտ մահմեդականն այս կամ այն մզկիթին կը կտակէ, այնպէս որ իւր ժառանգորդք պարտաւոր կը լինին այն մզկիթին տարեկան տուրք մի վճարել, հոգ տանիլ, և եթէ ժառանգորդն անճետի, կալուածն դլխավին սեպհականութիւն կը լինի այն մզկիթին։ Այս մահմեդականն որ բանտարկուեցաւ, ասացի, 23 դահեկան պարտական էր իբրեւ յետամնայ տուրք այն վագըֆ

տանն համար որ ինքն կը յանձանձէր։ Մարդն լաւ իրազեկ էր վագըֆ միւտիրին գողութեանց և ուստի օր մի սկսաւ սաստիկ նախատել զնա երբ սրահէն կ'անցնէր, և սպառնացաւ թէ ի Պոլիս պիտի երթայ և զինքն հալածէ ամեն ինչ յայտնելով կեդրոնին։ Հետևեալ օրն արձակեցին այս համարձակ խածանն, և իւր որդին, իբր 20 ամեայ երիտասարդ, բանտարկեցին։ Սա ալ մնաց հոն օրերով։ Բուական ուշիմ տղայ էր։ գիշեր մի բանտին բաղդատաբար բանգէտ համարուածներն կը վիճէին թէ ինչ դարմանով կարելի էր Թրքական դատաստանն բարուոքել։ Այլ և այլ կարծիքներ յայտնուեցան։ Մեր երիտասարդն, որ լռիկ միտ կը դնէր վէճին, յանկարծ միջամուխ եղաւ սա անմոռանալի դիտողութեամբ, «Պա՛րուԹ գոգուսու լազըմ, պարուԹ գոգուսու» (վառօդի հոտ պէտք է։) Ասել կուզէր թէ Թուրք պաշտօնէից անզգամութեան ազդող միակ դարմանն է պատերազմն, որով ժանիք կը թափին և ամեն ոք փոքր ի շատէ կը զգօնանայ՝ որպէս ծեծ կերած տղայ։

Բան զամենայն ահաւորն և նշանակիչն ալ պատմեմ ու վերջացունեմ։ Գիշեր կը լինէր որ 5—600 Թուրքեր կը լեցունէին բանտի բակն։ Ո՞վ էին դոքա։ Ինչ՞ կը պահանջէր կառավարութիւնն։ Դոքա գիւղացիներ էին, որք իբր թէ տուրքերն չէին վճարած ամբողջ. Խեղճ, տգէտ, անճարակ, անլեզու Թուրք գիւղացիներ, որք անասունի նման անմռունչ կը չարչարուին, կը խուզուին, կը կթուին։ Աչ կարդալ գիտեն ոչ գրել. տուրքն կը վճարեն գիւղի քիզիրին, որ ևս յաճախ հաշիւ բռնելու անկարող է և միշտ անյօժար։ Թէև գիւղացիք մէկի տեղ հինգ անգամ վճարեն, դարձեալ յետոյ կ'իմանան թէ շատ պարտք ունին եղեր, տարիներէ ի վեր դիզուած։ Իմ բանտարկութեանս միջոցին կուսակալն էսթէրլի հանած էր, այսինքն ջրեւոր ոստիկաններ, որք հրաման ունին ամեն խստութիւն ի գործ դնել անվճար տուրքերն գանձելու համար. ուստի և կը ծեծեն, կը բռնեն, կը խարազանեն, կը կողոպտեն, կը ձիթեն և կ'արեւեն, կը կախեն և այլ պէսպէս չարչարանօք կը տանջեն ողորմելի գիւղացիներն, որք ի զուր կ'աղաղակեն թէ վճարա՛ծ են, և թէ նորէն վճարել յօժար են բայց չունին հնար, չունի՜ն և ոչ ինչ։ Ահա այդպիսի գիւղացիներ էին որ օր ըստ օրէ հարիւրներով կը բերուէին կը խճողուէին բանտի մէջ և շուրջն։ Սա ի չգոյէ տեղւոյ, զոմանս արձակել կը ստիպուէր կառավարիչն։ Զարմանալին այն է որ այդ գիւղացւոց ոմանցմէ իմացայ թէ իրենցմէ պահանջուած տրոց գումարն աւելի մեծ է քան արժէքն իրենց բովանդակ ստացուածոց։ Այս բանն իմացած լինելով հասկացայ յետոյ թէ ինչու գիւղերէն ոմանք այս դէպքին պատճառաւ ամայացան. գիւղացիք տուրքերն վճարելու հնար չունենալով՝ կառավարութեան ձեռքէն պրծնելու համար թողին հող և ամեն ինչ և գնացին ուրիշ գաւառներ իբրև չքաւոր պանդուխտ ընտանիք։

Ես բանտին մէջ իմ ցաւս մոռցայ։ Ամեն օր նորանոր արհաւրաց առջև կը գտնէի ինքզինքս։ Ես միայն չէի յանիրաւի հարստահարեալ, բոլոր ժողովուրդն, հայ և Թուրք, քրիստոնեայ և մահմետական, տիրեալ և տիրող կը նեղուէին անհնարին նեղութեամբ։ Կառավարութիւնն զարշելի հանդիսացած է նոյն իսկ Թրքաց։ Հայ աղքատիկ դասերն ալ յետին չքաւորութեան հասած են, ամեն բան, էական կահ կարասիներն անգամ վաճառած և տրոց վճարման զոհած լինելով. և շատեր գիտեմ որ կը զարմանան և տեսակ մի հետաքրքրութեամբ կը սպասեն իմանալ և տեսնել թէ կառավարութիւնն գա՞լ տարի ինչպէս պիտի կրնայ գանձել տուրքերն այն ընտանիքներէն որ կիսամերկ գետնախուշտի կը լինին, և ընտանեաց հայրն օրական չնչին վաստակն օրն օրին կը ծախսէ։ Ես ալ կ'ուզեմ հրաշք տեսնել, եթէ կառավարութիւնն կարող է «ի չգոյէ ի գոյ ածել զչգոյսն։»

ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆ

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեանս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստօֆիսին Station E։(Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի Թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ՊԱՊԻԿ ԵՒ ԹՈՌՆԻԿ

ԳՐԵՑ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ

ԳԻՒՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ԹՈՌՆԻԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԵՒ Ի ԼՈՅՍ ՀԱՆԻՆ ՑՕԺԱՐԱԿԱՄ ՓՈՒԹՈՎ
ԱԶՆՈՒԱԿԱՆ ԵՂԲԱՐՔ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ
Տպ. ի Մայր Աթոռ Արարատեան
Ս. Էջմիածնի
1894—ՌՅԽԳ
Երես 213

Այս պարզ տիտղոսով գիրքն, գեղջուկ ժողովրդի հասցէին ուղղուած այս երկն գերազանց մատենագրական ճարտարութեամբ պատրաստուած է և ամէն՝ թէ գիւղացի թէ քաղաքացի՝ Հայու ուշադրութեան արժանի է։ Քաղաքացին պարտի կարդալ զայն եթէ կը փափաքի Հայ գիւղական կենցաղավարութեան պայմաններն ճանաչել, — վարք ու բարքն, նիստ ու կացն, կեր ու խումն, հագուստ ու կապուստն, վար ու ցանն։ Ուսանողն հոն պիտի գտնէ գիւղական կենցաղոյ յատուկ ոչ սակաւ հայերէն բառեր, որպիսի են սռնակ, փափան, ջարջառ, առատամն, մանկեռ, կլթոց, Չրկալ, հացբեր, կթուոր, պայտօր, կաթնվար, աշնանացան, գարնանացան, գոմշլ, փթիր թխել և այլն։ Նոքա իսկ որ բան սովրելու փափաք չունին, այլ միայն զուարճանալ կ'ուզեն, գոհ պիտի լինին կարդալով Հայրիկի այս մատեանն ուր զուարճախօս և պարզ ոճն բանաստեղծական վայելչութեանց լծակցած է, և կարի հետաքրքրական առակներով, մանրավէպերով, զբօսալի դիպաց և անցից յիշատակներով համեմեալ է։

Գրքին նիւթն, հեղինակին նախորդ աշխատասիրութեանց աննման, գիտական է— երկրագործութեան, հովուութեան, անտառաբուծութեան, տնտեսութեան դասեր կուտայ հայ շինականաց։ Կը յորդորէ որ փաթաթէս ես մշակեն, և շերամ հանեն. Կը ցուցնէ թէ հերկելու համար եզն լաւ է քան զգոմէշ, զի սա, հակառակ խոշոր մարմնոյն, է աւելի փափուկ առողջութեան տէր. Կը հաստատէ նաև թէ ինչու ձին նախամեծար է քան զեզն իսկ։ Կը խօսի կալի, տան, շտեմարանի, ճանապարհի, գործիներու շինութեան մասին կարեւոր և դիւրին բարեկարգութեանց և նորոգութեանց վերայ։ Կը բացատրէ արուեստական լճեր շինելու, ծառաստան հասցունելու, արտամէջ տեղ թողլու, շրջապատ թումբ շինելու և արտերն հարթելու, մաքրելու և աղբով պարարտացունելու օգտակարութիւնն և դիւրին եղանակներն։ Կը շեշտէ ոչխարաբուծութեան առաւելութիւններն ի վերայ պարզ երկրագործութեան։ Այս ամենն ցուցնելու տեւեն, ընթերցողին կողմանէ յարուցանելի առարկութիւնն կը նախատեսէ և կը հերքէ, և ուր որ չի կրնար հերքել անմիջապէս ի գործ դնելու մասին գոյ եղող դժուարութիւնն, կը յայտարարէ թէ գոնէ սկզբունքն գիտնալ լաւ է որպէս զի երբ պարագայք ներեն, ի գործ դրուին։ Այս վերջին կարգին կը վերաբերի հովուութեան և ձիաբուծութեան գործն, որ այժմ Քրդերու մենաշնորհն դարձած և ոմանց անհագին հարստութեան աղբիւր եղած է, զի Քրդերն բլրոց և լերանց վերայ բնակելով և վաչկատուն լինելով՝ կարող են իրենց հօտերն զովասուն և ջրաւէտ վայրեր արածել ըստ եղանակին, մինչդեռ Հայք դաշտաբնակ գոլով՝ ոչխարաց համար զով արօտ չունին ամառուան տօթագին եղանակում։ Հայրիկ չասեր ամեն բան յայտնի, բայց ընթերցողն կը հասկանայ թէ ձին աւելի կը գրգռէ Քրդուցանկութիւնն քան թէ գոմէշն ու եզ և աւելի արագօրէն կրնայ փախցուիլ, ուստի և կան բարեկարգութիւններ որք չի պիտի կրնան ի գործ դրուիլ ցորչափ Քրդեր անսանձ են և կառավարութիւնն զեղծ ի Հայաստան։

ՊԱՊԻԿ ԵՒ ԹՈՌՆԻԿԻ ընթերցողն կը տեսնէ սակայն թէ նոյն իսկ վարչական ներկայ յոռի պայմանաց մէջ ո՛րքան բարեփոխութիւններ կարելի է իրագործել հայ գիւղական կենցաղոյ մէջ եթէ գիտցող և եռանդ ունեցող գտնուի։ Ցաւալի է որ հայ գիւղաբնակութիւնն աւանդական թանձր քօղով ծածկուած՝ չի տեսներ պարզ և դիւրին բարեկարգութիւններն և սիրտ, կամք, խանդ չունի ի գործ դնելու։ Բնականապէս մտացի Հայն կատարեալ ապուշ կ'երեւի և հնոտի կերպերէն դէպ ի

լաւագոյնն քայլ մ'առնելու անկարող։

Գրքին գիտական հանգամանքն գեղջկական հասկացողութեան աստիճանին յարմարցուած են, և տարրաբանական, երկրաբանական բացատրութիւններէ և մեկնութիւններէ խոյս տրուած է։ Տրուած դասերուն մեծագոյն մասն այնպիսի բաներ են զոր ուշիմ և հետաքրքիր միտքն կարող է տեսնել և ցուցնել առանց բարձրը գիտութեանց մեծ պաշարի։ Եւ գրքին մասնաւոր արժանիք տուող և զայն ժողովրդին օգտակար և հասկանալի գործող պարագայն ալ յայտնի է։

ՊԱՊԻԿ ԵՒ ԹՈՌՆԻԿ գիտական արժանիքէն զատ ունի նաև բարոյական արժանիք։ Հայրիկի մտքէն և սրտէն միանգամայն ազբերացած է այն։ Հոն գթած սրտի մի անզսպելի յորդորքն կը յորդեն և կարծրասիրտ գիւղացւոյ քար սիրտն կ'ոգողեն։ Ի՞նչ կը կարծէք, հայ գիւղացին գթած և գորովարի՞բա մարդ է։ Հայրիկ կը վկայէ թէ կան չատ անգութներ։ «Երբեմն կը տեսնեմ, կասէ, խեղճ անասուն ուժաթափ լինելով լուծն ի վզին այնպէս ակօսին մէջ կը թաւալի, դու տես էն ժամանակ ո՞րչափ խարազան պիտի ուտէ, հարուածին չտոկալով ճարահատ կը կանգնի, քիչ մի տեղ կերթայ և դարձեալ կը թաւալի։ Անգութ հերկագործ չի մտածեր՝ պահ մի թողում այդ խեղճ անասուն, թող երթայ արածայ հանգստանայ և ապա բերեմ լծեմ.» Արդարեւ սոսկալի բան է այդ, և թուրք կամ քուրդ վաշխառու հարստահարչին կը հաւասարեցուցնէ հայ գիւղացին, և բարոյական անազնուութեան և միանգամայն ապչութեան նշան է։ Հայրիկ որ խորապէս կը հասկանայ թէ ինչ է ճշմարիտ փրկութիւն ազգի, յաճախ կը դառնայ գթութեան խնդրոյն յընթացս մատենին, և ամենայն ճիգ կը թափէ անգթութեան արատն սրբելու հայ գեղջուկ հոգիէն։

ՊԱՊԻԿ ԵՒ ԹՈՌՆԻԿ գիտական, բանասիրական և բարոյական արժանիքէն զատ արժանիք մ'ալ ունի, մեծ արժանիք մի— որ է ազգային և հայրենասիրական։ Գրքին բուն և խորին նպատակն է Հայաստանի փրկութիւնն հնարաւոր գործել։ Ընթերցողք կը յիշեն մեր «Ազգային դաւանանքի» երկրորդ եզրակացութիւնն թէ «Հայաստան իբրեւ երկիր, չատ աւելի պատուական է քան ընդհանրապէս կը կարծուի։ Հայ Հոգւոյ գործօն եղած է այն յանցելումն, անոր լաւագոյն պահարանն է այսօր և անոր լաւագոյն ասպարէզն պիտի լինի յապագային։» Հայոց Հայրիկ քաջ ըզգացած է թէ հայ գիւղացին է Հայաստանի հիմն ու խարիսխ, որ եթէ տկարանայ և ցրուի, մեր բոլոր ազգային յոյսեր կը ցնդին։ պէտք է ուրեմն զօրութիւն տալ գիւղացւոյն, տնտեսական և բարոյական բարւոքումբերել անոր վիճակին, չթողուլ որ պարտքի տակ ընկճի և հողերն ձեռքէ հանէ, պէտք է պանդխտութեան հոսանքին դէմ դնել։ բայց ի՞նչպէս։ ի հարկէ արդար պահանջներ ունիմք երկրին կառավարութենէն և պէտք է պնդել այդ պահանջմանց վերայ։ Հայրիկ այդ փափուկ խնդրոյ չի մերձենար, բայց խորին իմաստութեամբ կը հնարի գիւղացին ինքնօգնութեան և ինքնազարգացման մըղել, անել տալ այն որ գիւղացին կարող է անել քաղաքական այժմու դառն պայմանաց մէջ։ Շատ պարզ է, որ եթէ մեր հայ երկրագործք Հայրիկի դասերն ի գործ դնեն գէթ ըստ մասին, տարին 5—10 միլիոն դահեկանի չահ կունենան։ Այդ բոլորովին իրենց ձեռքն է։ Եւ ճշմարիտն ասելով՝ ա՛յն ժողովրդի փրկութեան յոյս կայ որ ինքն իրեն կ'օգնէ, ինքն իւր վիճակ բարւոքել կ'աշխատի հնարաւորին չափով։

Հայոց Հայրիկն ու Հայրապետն, իրրեւ գթած և իմաստուն հովուապետ, սրինգն առած կը նուագէ, կը գիւթէ իւր ոչխարներ և զնոսա Հայաստանի ճոխ հողին, զով ջրերուն ու առողջ օդին կը հրաւիրէ ի պանդխտութենէ։ հողին անգին արժէքն կը ճանչցունէ հայ երկրագործին, և կը սովրեցունէ նմա թէ կարող է չատ աւելի արդիւնք ստանալ այս ինչ բարեկարգութիւններ ժրութեամբ ի գործ դընելով, որպէս զի չի ստիպուի պարտք անել և հողազուրկ լինիլ, մինչև որ վարչական պարագայք փոխուին։

Հայրիկի այս գիրքն գթութեամբ և իմաստուն հայրենասիրութեամբ լի է, և Հայաստանի փրկութիւնն ապահովելու հըզօր գործի։ Մեր անկեղծ յոյսն է թէ արդարեւ պիտի ծառայէ Հայուն և Հայաստանի տզատութեան պայմաններն իրագործելու։ ՊԱՊԻԿ ԵՒ ԹՈՌՆԻԿ Խրիմեան Հայրիկի գլուխ գործոցն է անմահ և անգին։

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ՅԱՋՍ ՕՏԱՐԱԶԳԵԱՑ

ՀԱՅՐԻԿԻ որպիսի բարձր համարում վայելելն Հայաստանի օտարազգի բնակչաց քով՝ շատ անգամ յիշուած է, բայց թէ եւրոպացի ուսեալ և բանիբուն արանց վրայ ինչ տպաւորութիւն կը թողու Նորին Սրբութիւն, այդ շատ ծանօթ չէ մերայնոց։ Մեր մէջ մի քանիներ կը ջանան կարծել տալ պարզամտաց թէ Խրիմեան ռամիկ և անմշակ ամբոխին աչքն է շլացուցեր։ Քոնթէմփորէրի անգլիական Հանդիսին Յուլիս թուոյն մէջ շարունակուած յօդուածին մէջ, որ Հայկական Խնդրոյն վերայ կը ճառէ, հեղինակն, Լինչ, խօսեր է նաև Վեհափառ Հայրապետին անձին և գործոց վերայ, այդ մասըն դիտմամբ հանելով երկար յօդուածէն՝ աստ առանձին տալ ի դէպ կը համարիմք։

«Հայ եկեղեցւոյ գերագոյն ղեկավարըն, Կաթողիկոս Մկրտիչ Խրիմեան, բազում տարիներէ հետէ պարագլուխ առաջնորդն է հայկական շարժման, և աւելի քան այլ ո և է ոք ներշնչած է Հայերուն իրենց արժանապատուութեան զգացումն և իրենց անցելոյն արժանաւորութիւնն։ Ժողովուրդ մի որոյ ոգին ճմլուած է և որոյ արութիւն նկուն եղած է՝ նոր կեանք կը առնու այսպիսի ուսուցողէ և մարդ լինիլ կը սովրի։ Եթէ Նորա թարմագոյն աշակերտաց ոմանք արտայայտած են ինքնականութեան եռանդ մի որոյ վերայ շատեր հակամէտ են ժպտելու, կրնան գոնէ մխիթարել իրենք զիրենք այն մտածութեամբ թէ գեր ի վերոյ են իրենց այն կարգի ազգայնոց որք, ուր հնար է, ուրացեր են իրենց ծագումն անտեղի ամօթով։ Ուսուցիչն երևութով և անձով կ'արդարացունէ իւր դասերն, և հայ ցեղն կրնայ յիրաւի հպարտանալ այն օրինակին համար որ յանձին Խրիմեանի կ'ընծայուի իրեն։ Նորա օծման հետաքրքրական արարողութեան ատեն, որ անցեալ Հոկտեմբերի տեղի ունեցաւ յէջմիածին, կարծես թէ առ ոտս Մասեաց կենդանի էր դեռ հին ոգին, և թէ իւղն որ իջաւ այդ պատկառելի գլխոյ վերայ ոսկի աղաւնւոյ մի կտցէն՝ կօծանէր աստուածախօս օրէնսդիր մի իւր ժողովրդեան։ Վեհ դէմքն, ազուոր և դրաւիչ երեսն, գեղեցիկ աչերն և համարձակ բայց կանոնաւոր դիմագծերն ի վերայ սպիտակախառն յորդ մօրուաց, տիպարն կը ներկայացունեն այն անձնական գեղեցկութեան որ յատուկ է Հայոց ոմանց և որ, սակայն, յաճախ կը խաթարի աստիճան մի խորշութեամբ որ կ'աճի ծերութեան հետ։ Այս ուշագրաւ երեսին իւրաքանչիւր գիծն բարձր նպատակի մի ազնուութիւնն կ'արտայայտէ, և քիչ մարդիկ կան որք այնքան անձնական հրապուրանաց հետ այնքան ազնիւ երեւոյթ միանգամայն բերեն յանձինս։ Ցընթացս երկար կենացն մոգական ազդեցութիւն մի գործած է իւր հայրենակցաց վերայ, և մինչ սիրելի և մեծարելի է ամենուն, մանաւանդ խոնարհներուն և աղքատաց գրեթէ նախապաշարեալ պաշտպանքին առարկայ եղած է։ (Հոս հեղինակն կը պատմէ Քրդու մի զՀայրիկ սպաննելու ունայն փորձն որ ծանօթ է ամենուն։) Իբրեւ գըրող, արտայայտած է նա բանաստեղծութեամբ լեցուն արձակ լեզուաւն աստուածաշնչային այնպիսի ըմբռնումներ և իւր ժամանակաց խռովութիւններուն նկատմամբ այնպիսի խորհրդածութիւններ որք Արեւելից հին քրիստոնէից ջերմ երեւակայութենէն կրնային բխած լինիլ։ Նորա գործունէութիւնն սահմանափակուած չէ կեանքի անկռիւ շրջաններուն մէջ։ Նա էր որ հայկական դատն ջատագովեց Պէռլինի վեհաժողովում։ Յաճախ նեղութիւն կըրած է իւր քարոզներու հրոյն պատճառաւ։ Թերեւս իւր սիրելի և սքանչելի յատկութեանց քան զամենայն ուշագրաւն է իւր մշտայօժար բարեսրտութիւնն և գրկաբաց համակրութիւնն որով կը մասնակցի իւր ընկերաց նեղութիւններուն։ Երբ ամբոխք շրջապատած էին զինքն և կը ջանային համբուրել աջն իրենց մեծագոյն ազգային պաշտօնէին, և նշմարել նորա դէմքն, հանդիսատեսին միտքն կ'ուղեւորէր դէպ այն հին դարն երբ յոյն թագաւորն (Սոփոկղի «Իդիպոսն») կ'ընդունէր իւր հարուածեալ ժողովուրդն. «ո՛հ, սիրելի զաւակունք իմ, ինձ ծանօթ է ձեր աղօթից նիւթն, քաջ գիտեմ թէ դուք ամենեքին խորապէս վշտահար էք, սակայն և այնպէս չկայ ձեր մէջ ոք որ ինծի չափ ցաւի։ Զի ցաւն զոր դուք կը կրէք, իւրաքանչիւրդ միայն կը պատկանի, — իւրաքանչիւրդ կը տառապիք ձեր անձին համար, և ոչ այլ ուրուք համար — իսկ իմ հոգիս կ'ողբայ պետութեան համար, ինծի համար և ձեզի համար միանգամայն»։

ԼԻՆՉ

ՀԱՅԿ

ՀԸՆԴԷՍ ԿԻՍԱՄԱՆԱՅ

ԽՄԲԱԳԻՐ Մ·Ս·ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Հասցէ
Editor of "HAIK" 139 West 22nd St.,
New York.
U. S. America.
կամ Redaction de la Revue "HAIK" ևն

ՊԱՏՄԱՆԻ

Տարեկան բաժնեգինն է
ամեն երկրաց համար
երկու տալեր կամ տասն ֆրանք
Կանխիկ

ՆԱՄԱԿ Կ· ՊՈԼՍԷ

ՄԵՐ ՎԻՃԱԿԸ

Կ·Պոլիս, Յուլիս 16, 1894

Մեծ· Խմբագիր ՀԱՅԿ պատուական հանդիսի ի Նիու Եորք,

Թէպէտ աղէկ սպասուրթիւն չըներ եթէ առաջին նամակն երկարախօս լինի, բայց և այնպէս իմ այս անդրանիկ թըղթիս համար ներելի պէտք է համարուի, ինչու որ նիւթերը շատ են և ես չուարած եմ թէ ուսկից սկսիմ և ուր վերջացուցնեմ։ Եթէ լուրերու ամենէն սարսափելիէն ըսկսիլ ուզեմ, չգիտեմ թէ երկրաշարժէ՞ն, սովէ՞ն, քաղաքական սպանութեան փորձերէ՞ն, կրօնափոխութեան դէպքերէ՞ն, հնտախտէ՞ն թէ դաղթականութենէն ըսկսիմ։ Առաջնութեան իրաւունքը որո՞ւն տամ։ Ո՞րն երկար պատմեմ և ո՞րն համառօտ։ Մեծունաքը կը վկայեն թէ այս օրինակ տարի տեսած չունէին մինչև հիմա։ Ամեն կողմ արհաւիրք կը սիրէ։ Երկինք իր անձրեւը կը զլանայ տեղմը, երկիրը սարսափած գազանի մի պէս կարծես կը ցնցուի կամ ահատաւոր լուսնոտի մը նման կը խաղցունէ և ինչ որ աւազակներ գողեր, մարդասպաններ չեն կարող ընել, ինքը կ'ընէ, եկեղեցիներ, պալատներ, դպրոցներ, տուներ կը խախտէ, կը խարխլէ, կը կործանէ· ո՞վ ինչ կրնայ ըսել, երկրաշարժին ոչդեղ կ'ըլլայ և ոչ սանձ կը դրուի բերանը։ Կարծես թէ աստուածային ազդարարութեան պէս բան մը կայ այս շարժին մէջ· բռնաւոր կայսր մը և մեղաւոր կայսրութիւն մը կը սատէ և գետին տապալել կ'ուզէ։ Եթէ զուգադիպութիւն ալ է, նախախնամական հարուածի մը տպաւորութիւն կը թողու ամենուն վերայ։ Խղճերը ցնցուած կ'արթննան և բոլոր ազգերը կը հառաչեն թէ ասանկ երկրին ասա՛նկ պատիժ կը վայելէ։ Թուրքերուն մէջ մանաւանդ կը զօրանայ այն հաւատքը թէ օսմանեան կայսրութեան վերջը մօտ է, առ դուրս է։ Կարծես թէ աներեւոյթ զօրութիւն մի երկինքին վրայ «մանէ մանէ, թեկեղ ու փարսին» գրած ըլլար, այնպէս զարհուրած է իշխանութիւնը։

Իրաւ որ տեսարանն ահաւոր էր երկրաշարժի առաջին պահուն։ Շուկայի այն կողմն որ ես կը գտնուէի, հանդիսատես եղայ ահաբեկ ժողովրդի աննկարագրելի ժխորին· առաջին ցնցմանէն փախչողներն երկրորդէն կը բռնուէին, և երկրորդէն ազատողներն երրորդին կը հանդիպէին· մարդիկ իրար կոխոտելով դռներէն դուրս կ'ելնէին, և հասարակ փողոցներէն դէպ ի հրապարակ կը ճեպէին։ Փլչումներու փոշին թանձր ամպի պէս օդն լեցուցած էր, չէինք կրնար չունչ առնուլ։ Սուլթան Պայազիտում ամբոխն ծովու պէս լեցուած էր և ծովու նման կը ծփար ու կը մռնչէր, ամենուն փափաքն էր հասնիլ Պայազիտի բաց հրապարակը, և անտի Գում-Գափուի կայարանն։ Իսկ արուարձաններու նաւամատոյցներն ողբացող ընտանիքներ եկած խռնուած էին սպասելով իրենց այրերու, եղբայրներու կամ որդւոց վերադարձին։ Առաջին ցնցումն կէս օրէն քանի մի վայրկեան վերջը տեղի ունեցաւ այն պահուն երբ Միւէզզիններն յաղթպ կը կոչէին հաւատացեալներն, և կ'ըսուի թէ 40—50 աշտարակ կործանած են· ոմանց հետ միւէզզիններն ալ վար թափած։ Բաղնիքներ, խաներ, եկեղեցիք վերջապէս քարուկիր ամէն շէնք վնասուած կամ խարխլած են գանազան չափով, եթէ բոլորովին չեն կործանած։ Չվնասուած շէնք չկայ կրնամ ըսել։ Պոլիսը բոլորովին ամայացաւ։ Հիմա կառավարութեան օգնութեամբ վար կ'առնուն խարխլած շէնքերը։ Պիտական վնասն անհաշուելի է։ Ժողովուրդը վրաններու տակ կը բնակի հիմա· ամեն գործ դադրած է։ Համաճարակէ ալ կը վախցուի, վասն զի ժողո-

վուրդը բացը բնակելով ամեն տեղ գարշահոտութիւն տիրել սկսած է։ Կառավարութիւնը կարօտելոց կ'օգնէ փոքր ի շատէ։

Այս նոր աղէտը մեծ ազդարարութեան մի նման կը խօսի Թրքին թէ Ալլահը վերջ տալու վրայ է օսմանեան պետութեան։

Չգիտեմ թէ դուք տեղե՞կ էք Թրքաց մէջ տիրող այս հաւատքին։ Շատ նշաններէ կ'երևի թէ Սուլթան Համիտ ինքն ալ այն հաւատքն ունի, և անոր համեմատ ալ կը պատրաստուի։ Մեր ողբացեալ Յակոբ Փաշայի շնորհիւ Սուլթանը անհուն հարստութեան տէր է հիմա։ մայրաքաղաքին մէջ «Զիֆլիկի հիւմայիւն Նէզարէթին» կայ, և ամեն գաւառ պաշտօնեաներ ունի։ Համիտ օսմ. կայսրութեան գանձան կողմերը իւր անունին ստացած է ընդարձակ հողեր, ագարակներ, որոնք հոգարաւոր վարձուորներ կը մշակեն և յուռթի կը գործեն։ Ամենէն հարուստ կայսրն աշխարհի վերայ Սուլթան Համիտն է։ Անոր անձնական գանձուն աղբիւրներն տարուէ տարի կ'առատանան։ Համիտ այսքան մեծ հոգով և խնամով հողատէր, հաստատուն կալուածոց տէր դառնալու ի՞նչ պէտք ունի, պիտի հարցնէք։ Նա պատրաստութիւն կը տեսնէ ապագային համար, որպէս զի երբ որ գահընկէց լինի, ձեռքը նիւթական զօրութիւն ունենայ և տնտեսական ապագան ապահոված ըլլայ իւր սերունդին համար։ Զեզի ծանօթ է անչուշտ թէ Սուլթան Մէճիտ իւր սերունդին համար ուրիշ տեսակ ապահովութիւն երաշխաւորեց։ Նա ուզեց կայսրութեան օրէնքն այնպէս փոխել որ օսմանեան թագն որդի ի հօրէ ուղղակի ժառանգուի և ոչ թէ կողմնակի գծով՝ ընտանիքին երիցագոյն արուին երթայ։ Եթէ այս յանդուգնը մտածութիւնը յաջողէր, իրեն պիտի յաջորդէր սիրեցեալ որդին Մուրատ, այժմ խելագար, բայց վաղահաս մահն պատեհութիւն չտուաւ, և Մէհէմմէտ Ալի Փաշան, որ հակառակ էր նորա դիտաւորութեան, արթուն շարժելով ի դերեւ հանեց Բիզա Փաշայի միտքն որ Մէճիտի համամիտ էր այդ մասին, և ի վախճանել Մէճիտի, գահն հանեց Ապտիւլ-Ազիզն, Մէճիտի կրտսեր եղբայրն։ Ազիզ ալ իր կարգին մի և նոյն միտքն ունեցաւ և աւելի մեծ ճիգ թափեց որ իւր Մահէն յետոյ իւր որդին, Եուսուֆ Իզզէտտինը յաջորդէ իրեն, ոչ թէ Մուրատը։ Բայց Ազիզն ալ չյաջողեցաւ, յանկարծ գահընկէց լինելով և ապա սպաննուելով։

Սուլթան Համիտ ապագան կը մտածէ։ Գիտէ թէ այս ժամանակներս մանաւանդ քիչ հաւանական է որ Սուլթան մը հանգիստ թողուն իր գահուն վրայ։ Գիտէ թէ շատոնց ինքն ալ գահընկէց եղած պիտի ըլլար եթէ արտաքոյ կարգի ծայրայեղ զգուշութիւններով ինքզինք չրջապատած չլինէր։ Բայց մինչև ե՞րբ պիտի յաջողի այս ինքնապաշտպանութեան մէջ։ Ինքն ալ չգիտէ։ Իր հակառակորդներէն շատերը մեռցուց և աւելի շատերը Պոլսէն հեռու գաւառներ աքսորեց, բայց դեռ շատեր ալ կան իրեն լուռ թշնամի։ Համիտ կը մտածէ ինքն իրեն թէ դրամը ոյժ է, բայց դրամը կրնան գրաւել, մինչդեռ հողը, եթէ օրինաւոր կերպով «թափու» եղած լինի, դիւրաւ ձեռքէն չերթար։ Երբ Անգլիացւոց տուաւ Կիպրոսը, հոն ալ շատ հողերու տէր ելաւ Համիտ ինքն բայց որովհետեւ դեռ բոլորովին օրինաւոր ձեւակերպութեանց ենթարկած չէր, դատին մէջ իւր փաստաբանները չկրցին իրաւունք ստանալ։ Եթէ Ռուսին կամ օտարին ձեռքն իյնայ Կ. Պոլիսը և Համիտ վռնտուի, պիտի կրնայ նա՝ իւր անհուն հարստութիւնը վայելել, և մինչև անգամ քաղաքական դեր ալ կատարել եթէ առիթը ներկայանայ, զի դրամն ամենակարող է։ Բայց եթէ ներքին յեղափոխութեամբ Թրքերն զինքը գահընկէց ընեն, այն ատեն կարելի է հողերը զլանան իրեն։ Անոր համար Համիտ խորագէտ աւելի կը վախնայ իր ազգէն քան թէ օտարներէն, և բոլոր ուժով և անդադար կ'աշխատի որ ներքին յեղափոխութեամբ չի վերջանայ իր թագաւորութիւնը։

Առ այժմ Փատիշահին գլխաւոր նեղիչները Հայերն են։ Բանի կը սասկանայ բռնութիւնը, այնքան աւելի կ'ապստամբին հայ երիտասարդները։ Տեսնելով թէ խօսք, խրատ, բողոք, նամակ անօգուտ է, և թէ Աչըգեան այն ատիճան կը վախնայ որ կը հրաժարիմ ըսելու ալ կը վախնայ, երիտասարդները մտածեր են ատրճանակի բերնով խօսիլ այս անսիրտ մարդուն, և յերաւի այս միջոցը յաջողեցաւ։ Աչըգեան դեռ իր զարհուրանքէն սթափած չէր երբ իրեն միակ նեցուկ եղող Մաքսուտ Սիմոն

Պէյն ալ ձեռքէն առին։ Սիմօն Պէյը յիրաւի աւելի արժանի էր պատրիարքին եղած պատւին, որովհետեւ իրական պատրիարքը ինքն էր, և զՍր. Աշըգեան իբրեւ դիմակ մը կը գործածէր իր ժանտ դէմքը ծածկելու։

Խիստ տխուր յիշատակ կը թողու Աշըգեան իր ետեւը։ Նշանաւոր երկչոտի մը, ուխտադրուժի մը, վատի մը քստմնելի յիշատակը։ Ազգին կամքն, ամեն կողմէ եղած լուրջ յորդորները արհամարհելով մնաց պատրիարք, և միայն հրաժարեցաւ երբ սարսափելի ձայն լսեց։ Եւ այժմ ազգը իրաւունք ունի այս մարդուն հարցնելու թէ ի՞նչ ըրաւ այնքան ատեն պատրիարք աթոռը կրելով. ո՞ւր է Սահմանադրութիւնը, ո՞ւր է Ազգային Ժողով, ո՞ւր են գաւառաց առաջնորդք, ո՞ւր են ազգային դարաւոր արտօնութիւններ... անոնց ամենը իր օրովը կորսուեցան, իր ձեռքովը մեռան, թաղուեցան, հալածուեցան, ցրուեցան։ Վա՜յ քեզ, խեղճ և ապիկար ոճրագործ, ինչ պատասխան պիտի տաս առաջի ահեղ դատաստանին Աստուծոյ։ Խեղճ և անխելք արարած, ահա անարգելի եղար նաև այն բռնաւոր իշխանութեան, որուն ձեռքը հաճոյակատար մատնիչի դեր կատարեցիր։ Խաբուեցա՛ր չարաչար. վասն ամենուն ալ նախատելի է նոյն իսկ անոնց աչքին որոց գործիքն եղած է։

ՑՈՒՍԻԿ

ՆԱՄԱԿ ՃԱՎԱՅԷՆ

Սուրաբայա, 11 Յունիս, 1894

Մեծ. Խմբագիր,

Խնդրեմ հաճեցէք մի անկիւն շնորհել երկտողիս Ձեր ազգօգուտ «Հայք»ի մօտակայ համարների միոյն մէջ։

Բազմիցս կարդում ենք հայ թերթերի մէջ թէ հայ ընդհանրութիւն շատ սառըն և անտարբերութեամբ է վերաբերւում առ հայ լրագրութիւն։ Շատ արդարացի է հայ խմբագրութեանց այս գանգատ։ Այլ եւս. նոյն գանգատուող խըմբագրութիւնք յաճախ առիթ են տալիս ընթերցող հասարակութեան գանգատաւոր լինել նոյն իսկ նոցանից։

Հ. Խր. Միաբանութիւնս հաստատուել է ի վեր, որ մերձ երեք տարիք են, ըստ տրամադրութեան կանոնագրութեանս շատ մի հայ թերթերի բաժանորդ գրուելով փափաք ունէր և ունի տակաւին թէ՛ ներկայ ընդհանուր շարժմանց վերայ և թէ առ հասարակ հեռաբնակ մերազանց մասին շարունակ տեղեկութիւն ստանալ։

Այսպէս դարձեալ 1893 թուի Հոկտ. 9ին մի թուղթ գրեցաք առ «Արձագանք»ի խմբագրութիւն և ներփակելով չորս ու կէս Անգլ. ոսկւոյ փոխանակագիր մի, խնդրեցաք առաքել մեզ 1894 տարւոյ «Արձագանք»ի համարները. և ազգասիրաբար օգնել տալ յղել մեզ «Նոր Դար», «Մուրճ», «Արարատ» (ար. էջմիածնայ), «Տարազ», «Աղբիւր» և «Արաքս»։ Յայտնելով եթէ դրամն չբաւականանայ հաճենայ խմբագրութիւնն ծանուցանել մեզ և մեք անմիջապէս յղելոց եմք պակասորդն։

Սակայն կը ցաւեմք յայտ ասել, որ՝ թէև «Արձագանք» և «Նոր Դար» կուգան շարունակ, այլ վերոյիշեալ միւս թերթեր մինչ ցօրս չեմք ստացել. ոչ անգամ և մի թուղթ «Արձագանք»ի պատուելի խմբագրութենէ մեզ ծանուցանելոյ թէ մեր գումար հասել է իւրեանց ձեռ թէ դեռ ո՛չ։ Արդեօք վերագրելի՞ է այս ռուս կառավարական խստութիւնների և արգելքների։

Նոյն անուշադրութիւն իմա՛ «Մասիս»ի և մի երկու այլ խմբագրութեանց կողմանէ։

Միաբանութիւնս ստանում է նաև Անգլիերէն լրագրեր։ Կարծէ՞ք երբէք այդպիսի անուշադրութիւն պատահում է.— ո՛չ երբէք։

Յուսամք զի պատուելի հայ խմբագրութիւնք կը հաճենան իւրեանց ուշադրութիւն տալ այս կէտի, և առաջի աչաց ունենալով թէ՛ իւրեանց օգուտ և թէ ընթերցող ընդհանրութեանն զուրկ չպահելոյ և բաւարարութիւն տալոյ նոցա ընթերցասիրութեանն՝ կը ջանան ո՛ր և է անկանոնութեան առաջն առնուլ։

Ի դիմաց Հ. Խր. Միաբանութեան
Ց. ՏԷՐ. Կ. ՅՈՐԴԱՆՆԵԱՆ
Քարտուղար

—Կառավարութիւնն դադարման դատապարտեր է «Աւետաբեր» շաբաթաթերթըն՝ այն պատճառաւ որ սովելոց ի նըպաստ հրատարակութիւն արած և հանգանակութիւն անել սկսած էր։

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ

Բ. Ի ՌՈՒՍԻԱ

(Շար. ՀԱՅՐի 10դ թիւէն. տես Յուլիսի թիւն Քոնթէմփորէրի Բիվիուի)

ՌՈՒՍԱՀԱՅՈՑ ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ՅԱՌԱՋԴԻՄՈՒԹԻՒՆՆ

Յօդուածագիրն կը խոսուվանի թէ Ռուսական Հայաստանի մէջ աւելի հանգիստ են Հայք քան ի Թուրքիա։ «Եթէ, կ'ասէ, ի ներկայիս, հայ գիւղացին կը հնձէ իրեն համար ինչ որ ինքն սերմաներ է, և անհանդարտ Քուրդն ստիպուած է պատկառ կալ օրինաց, Ռուսիոյ պարտականն է ժողովուրդն իւր այս ազատութիւն անցեալ տարիներու անիշխանութենէն և սանձարձակութենէն...։ Բայց քաղաքականութիւնն աւելի քան զայդ յուսալու շատ թոյլ չտար։ Երկրին նիւթական աղբիւրներն չեն բացուած և կառավարութիւնն կը թուի անկարող կամ անյօժար լինիլ զայնս յօգուտ գործածելու։ Ճոխ անտառներն և հողերն որք առատօրէն պիտի վարձատրէին անառատ հոգատարութիւն մ'իսկ, կը մնան բարձի թողի եղած։ Հայկական լեռնադաշտն դեռ մղոն մ'իսկ երկաթուղի չունի, և հազիւ ոևէ ճանապարհ՝ բայց յայնմանէ զոր զինուորական պէտքն հարկաւոր գործած է։ Երկրին վաղամանօթ եղող անձինք ասացին ինձ թէ ռուգման կողմանէ, որ անձրեւի սակաւութենէ նեղուող հողի մի համար այնքան կարեւոր է, պարոից ժամանակէն ալ ետ կը մնայ այժմ։ Իրրեւ հետեւանք այս տնտեսական կայունութեան՝ այդ ապահով երկրին մէջ հողագործութեան արդասիքն հազիւ աւելի յաջողակ է քան թրքական սահմանին մէջ։ Կարծեմ ստուգիւ թէ այս չարեաց մեծ մասն ընծայելի է ծայրայեղ կեդրոնացման ի ռուսական մայրաքաղաքին։ Մինչ Անդր-Կովկասեան գաւառաց կառավարիչն Մեծ Դուքս մ'էր բնակեալ ի Տփղիս, կարող էր ժողովրդեան բարելաւութեան մասին իւր անձնական հոգածութենէն չարժեալ անկախ նախաձեռնութիւններ ունենալ։ բայց այսօր ամենափոքր ծրագիրն անգամ Բեդէրսպուրկի տնօրինութեան կ'ենթարկուի և կը հպատակի այն ընդհանուր տընտեսական քաղաքականութեան որ կը վարէ ամբողջ կայսրութիւնն։

Հայերն խորհելու ռուսական կերպերն սեպհականելու միտում չեն ցուցներ։ Ընդհակառակն, իրենց նիւթական լաւագոյն բարօրութիւնը կը գործածեն իրարու աւելի մօտ գալու և իրենց ազգային պատմութիւնն ու գրականութիւնն ուսումնասիրելու և հին օրերու լաւագոյն հայերէնն։ Ամեն արհեստի և ամեն կոչման մէջ, թէ գործոց և թէ կառավարութեան ծառայութեանց մէջ, Հայն ինքզինք կը գտնէ առանց մրցակցի և ասպարէզին բացարձակ տէր։ Նա է որ թղթատարական ծառայութիւնն կը կատարէ, և եթէ ուղեւորութեանդ մէջ չնորհքով չէնքի մի պատահիս որ ճարտարապետական ծրագրի նշաններ կը կրէ, գիտցիր թէ Աղէքսանդրոպոլցի Հայ շինողի գործն է այն։ Ընտիր գինին որ Երեւանում կը գտնուի, շինուած է նորագոյն եղանակաց համաձայն ի ձեռն Հայու մի որ երկու տարի գինեգործութեան արհեստն սովրած է ի Գերմանիա։ Երկրին դրամական գործողութիւններն հայ սեղանաւորաց ձեռքն են։ Ճարտար գործաւորն, ատանագործն, ժամագործն, հիւսն, հայ են։ Ժողովրդի մեծագոյն մասն ռուսերէն չի խօսիր կամ յոյժ թերակատար կը խօսի։

ՀԱՅՈՑ ԲԱՂԱԲԱԿԱՆ ՏԵՆՉՆ

Ուրեմն զարմանք չէ եթէ Հայն իւր արեւելեան երևակայութիւնն գործածած լինի այս թելադրիչ կացութեան վերայ այնպիսի կերպով մի որ Արևմտից աւելի լուրջ մտքին քիչ խոհական կ'երեւի։ Նոր Հայկական թագաւորութեան մի գաղափարն վառեր է ազգային խանդն զոր իւր անցեալ պատմութեան ուսումն ալ աւելի հրահրեր է։ Արեւելեան Եւրոպիոյ օրինակն թուած է արդարացուցանել իւր փառասիրութիւնն։ Երբ թրքահայ գաւառաց մասին խօսիլ սկսիմ, պիտի ջանամ վերլուծել այն նախընթացներն որոց վերայ այսպիսի ակնկալութիւն պարտի հիմնուած լինիլ։ Հոս սաչափ միայն պիտի ասեմ որ եթէ կարենայինք քաղաքական խոշերու վերայէն ցատքել և լեռնադաշտին վերայ ընթանալ ամբողջ առած, պիտի գտնէինք, իբրեւ խարիսխ մեր քաղաքական հաշիւներուն, թէ Հայք բովանդակ ժողովրդին իբր կէսն կը կազմեն։ Անկախ հայկական պետութեան մի տեսի-

լը՝, եթէ երբէք իրագործուիլ կարենար, ամեն մտքի մի և նոյն կերպով չպիտի ներ կայանար։ Շատեր մարդկային յառաջդիմութեան իրական վտանգ պիտի տեսնէին այս փոքր պետութեանց ստեղծման մէջ։ Պայքարին վիթխարութիւնն, երբ մեծագոյն ազգաց ո և է մին պատերազմի դաշտը իջնելու լինի, կ՚ազդէ իբրեւ առողջարար չարխափան այն փառասիրութեանց որոց փոքր պետութիւնն գոհացում տալ կ՚ուզէ ամեն շնչին առթիւ։ Այսպիսի փառասիրական դատերու յագուրդ տալով յոռի վարչութեան և վերջապէս սնանկութեան մէջ կիյնայ, մինչ մեծ պետութեան մի առաւելութիւններէն քիչերն կարող է փոքրին ձողովուրդն վայելել։ Այսպիսի նկատողութիւնք ծանրակշիռ են, սակայն և այնպէս հազիւ կրնան յարմարիլ այս դէպքին։ Այսպիսի տեսութեանց համոզուած Հայն կրնայ իրաւամբ հարցնել թէ ո՞ր կողմ պարտի նայիլ ուրեմն։ Օսմանեան պետութիւնն չուզեր մինչև անգամ պաշտպանել զինքն, և ի դերեւ կը հանէ իւր ջանքերն երբ կարենայ։ Եթէ իւր աչքերը դէպ ի Ռուսիա դարձուցէ, չի տեսներ յոյս նիւթական այնպիսի յաջողութեան որով զօրէ ի վեր բարձրանալ իւր ներկայ անտեսական վիճակէն, և չի գաներ, ներկայ պարագայից տակ, իմացական կամ բարոյական յառաջդիմութեան յոյս։ Ինքզինք այսպիսի պայմանաց առջեւ գտնելով, ինքն իւր մէջ ապաստան կը փնտռէ։ և եթէ իւր ողջմտագոյն տեսութեանց հետեւի, պիտի աշխատի լռութեամբ և առանց ցոյցի՝ քեռք բերելու համար այն բաներն որոց դեռ պէտք ունի իւր ցեղն, բարձրացուցանել գիւղացին իւր ներկայ անկեալ վիճակէն, մաքրել գեկեղեցին, իւր աւելի հարուստ դրացիներու շահերուն նպաստել յօգուտ հանրային բարօրութեան։ Ահա ասոնք են աւելի օրինաւոր փառասիրութիւններն որք, թէպէտ ժամանակ կ՚ուզեն, ստուգիւ կը յաջողին, և որք, ինչ որ ալ լինի քաղաքական իրաց յեղափոխումն, պիտի հաստատեն իւր իրաւունքն ազդեցութիւն ի գործ դնելու իւր երկրի պատմութեան վերայ— այն երկրին՝ որ յառաջդիմութեան միակ հաստատուն տարրն է յարեւելս։

Հ. Ֆ. Կ. ԼԻՆԶ

ՀԱՅԵՐ ՅԵԳԻՊՏՈՍ

Ուրախութեամբ կը տեղեկանամք թէ Եգիպտոսի հայ գաղթականութեանց մէջ ազգային դատարակութեան պէտքն նոր ներնդեան համար զգացուիլ սկսած է։ Գովելի են մասնաւորապէս Իպրահիմիէ գիւղաքաղաքի Հայք, որք թէև սակաւաթիւ ընտանիքէ բաղկացեալ, իբր չորս տարի առաջ ձեռնարկած են վարժարան մի հաստատել երկսեռ մանկաւոյն կրթութեան համար, և արդարեւ արաբախօս մանկունքն սովորած են հայերէն խօսիլ և գրել։ Այդ գովելի շարժման գլուխ կեցած են տեղւոյն հարուստ և կրթասէր ընտանիքներէն երկուքն, Մեծ. Տեարք Յովհան Թոթվաեան և Գրիգոր Թարագճեան։

Յանկալի է որ Զակազիկի և Մանսուրայի և այլ տեղերու Հայք ևս փութան կրթարաններ հաստատել և ընտիր ուսուցիչներու ձեռքով ազգային կրթութիւն տալ նորափթիթ սերնդեան։ Մեզ յանուանէ ծանօթ է Զակազիկի հայ վաճառականներէն Մեծ. Տիար Գէորգ Սարգիսեան, բնիկ Ակնցի, որ կարող է իբրեւ բանիբուն և հարուստ անհատ գլուխ կենալ կրթասիրական շարժման մի։

Զմոռնամ յիշել զԳահիրէ, ուր, հակառակ բազում մեծագանձ հայ վաճառականաց ներկայութեան, դեռ չեն կրցած վարժարան մի հաստատել— այնպիսի գոլէժ մի ուր Թուրքիոյ և Եւրոպիոյ իսկ Հայերն յղէին իրենց երիտասարդ զաւակունք բարձր կրթութիւն առնլու։ Եգիպտոսի երկրին կառավարութիւնն ազատ է, գրեթէ անգլիական է, և մասնաւորյարմարութիւն ունին Եգիպտահայք ծառայելու ազգային բարձր դատարակութեան վսեմ գործոյն։ Հայ հարալսարան մի եթէ ստեղծել ուզուէր այսօր, լաւագոյն հողն Եգիպտոս պիտի գտնուէր։

Մինչև ե՞րբ պիտի քնանաք, ո՛ պգնիւ Եգիպտահայք։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՒ

—Անգլիական դեսպանն բողոքեր է արտաքին գործոց նախարարին ընդդէմ սճրագատ ատենի այն վճռին որով մահուան են դատապարտուած Սիմոն Պէյի կենաց դէմ փորձ անող Հայերն։ Դեսպանն պաշտօնապէս պահանջեր է Թրքաց ամբողջ դատաստանական կարգի բարեկարգութիւն։

—Խնուսէն հետեւեալն գրած են «Աւետաբերի— Ցարդ իւրաքանչիւր ընտանիք, ծախելով իւր ամեն ունեցած, օրուան նախաճաշիկն ձեռք կը բերէր։ Այժմ ծախուելու իրերն սպառեցան, և կարգն եկաւ հոգւոց սպառման։ ...Ո՛հ ո՛րչափ դժուար է ձեռք բանալ ուրիշին, ուստի կը մնան անկողնոց մէջ ընդ երկար։ Հոն կը խորովին իրենց ցաւոց և կսկիծներու մէջ, և կը սպասեն մահուան որ վերջ տայ այս դառնութեան։»

—Ամերիկացւոց մսիոնարական Պատ Ընկերութեան գլխաւոր քարտուղար ընտրուած է Պատ. Ճէյմս Լ. Պարթը, որ Խարբերդի կողմն իբրեւ մսիոնար լաւ տպաւորութիւն թողած էր իւր ազատամիտ ընթացիւք, և կը յուսացուի թէ Պատի գործոց գլուխն անցնելովն՝ Թուրքիոյ մսիոնարաց գործունէութեանն լաւագոյն ուղղութիւն պիտի տայ։

—«ՀԱԿԱԶԵԱՆ ԽԱԶԱԿԻՐՔ» է անունն նոր ընկերութեանն որ իւր առաջին ժողովն ունեցաւ ի Նիւ Եորք, Յունիս 3ին։ Այդ ժողովոյ մէջ ասենախօսեցին Հայր Սարաֆեան և Տր. Աթթարեան։ Ընկերութեան նպատակն է ազգային, բայց մասնաւորապէս պիտի չեշտէ հայ եկեղեցւոյ կարեւորութեան վերայ, այս մասին հակակշռել ջանալով այն կուսակցութեան ազդեցութիւնն որ հակակրօնային և կղերատեաց է։

—Հայր Տէրունեան, Ամերիկայի Հայոց հոգեւոր հովիւն, 800 տոլար հանգանակած է Ուստերի և շրջակայից Հայերէն ի նպաստ Հայաստանի սովելոց և յղած է առ Վեհ. Հայրապետն ամենայն Հայոց։ Հայր Սարաֆեան, նախկին հովիւ Ամերիկայի Հայոց, ձեռնարկած է Նոյնպիսի հանգանակութեան մի Նիւ Եորքի կողմերն։

Ուստերի Հայերն, այժմ իբր 600, երկու երրորդ մասամբ անգործ են։ Մեծ մասամբ Արշ փողոցի մէջ կը բնակին. և մի քանի տներ ամբողջովին գրաւած են. Տանց մէկն Հայու մի ստացուածքն է։ Ունին հոն խանութներ ալ, նպարավաճառներ, դերձակ, կօշկակար, ճաշարան, սեղանաւոր, թիթեղագործ են. և իրենք իրենց մէջ առեւտուր անելով՝ դրամն իրենց մէջ կը պահեն։ Հայ բժիշկ միայն Տոքթոր Սէրիճան կայ, նա ալ Ուստերէն հեռացեր է ժամանակի մի համար։ Կ'երեւի թէ մեր հայրենակիցներ իրենց մարմնաւոր ցաւերն օտար բժշկաց պատմել աւելի դիւրին կը գտնեն, որ գարմանք է։ Հայկական սովորութեանց և ուտելեաց ընտանի բժիշկն քան զօտարականն աւելի յաջողութեամբ կրնայ դարմանել հայ հիւանդն։

Ուստերի մեր գաղթականութեան մէջ կան այժմ 11 հայ ընտանիք։ Իրենք իրենց սեփհական տուն ունեցող ընտանիքներն են հետեւեալք— Բարակեան(Հայր), Բրուտեան, Եազըճեան, Նագաչեան, Նահիկեան, Թրոտիկեան։ Վարձեալ տան մէջ բնակող ընտանիքներն են Սէրիճան, Բարակեան (որդի), Թոփհանէլեան, Տոնիկեան և Ծերոնեան։

Յուլիս 4ի Ամերիկացւոց ազգային տօնի օրն, Յարութիւն Բրուտեան և Տիգրան Թումաճանեան, երկուքն ալ իբր 16 տարեկան պատանիներ, փախած են Ուստերէն՝ գրաւոր տեղեկութիւն թողլով թէ իրենք կ'երթան Հայրենեաց ապատութեան աշխատիլ։ Կ'ասեն թէ պատանի Թումաճանեան իւր եղբարց արկղէն 200 տոլար գողցած տարած է հետն։ Լաւ չի կայ թէ ուր են գնացեր այս տհաս պատանիներ։

Այսպիսի դէպք անակնկալ չէ Ուստերի Հայոց համար։ Հոն Հայերու մեծագոյն կեդրոնացումն կայ, և երբեմն ստատիկ ջերմութիւն կը ծագի մերայնոց մէջ, որպէս ի փեթակի։ Ամեն կիրակի երեկոյ, ժամ 7½ին ժողով ունին անդ մերազնեայք երկու տարբեր տեղեր, մին է Հնչակեանցն, միւսն տեղի կ'ունենայ Հայ եկեղեցւոյ վարի յարկի ժողովասրահին մէջ։

«Հայքի» Խմբագիրն Ուստերի մէջ եւրեցած էր և Հայր Տէրունեանի և այլ հայրենակցաց սմանց հետ տեսնուելէ յետոյ աներեւոյթ եղած էր ամարանոցի սակաւօրեայ զբօսանք վայելելու և հանգչելու համար իւր Ամերիկացի մէկ բարեկամին հետ։ Կիրակի երեկոյ յանկարծ երեցաւ եկեղեցւոյ ժողովասրահին մէջ, դիտելու համար թէ որպէս կը կատարուին ժողովներն։ Այդ ժողով «Տնտեսական Մութիւն» անունն կը կրէ։ Ատենապետ և ատենադպիր ներկայ էին, ներկայ էր նաև Սրբացան առաջնորդ Հայրն։ Ներկայից թիւն 120ի մօտ էր, և դիպուածով իմանալով «Հայքի» խմբագրին ներկայութիւն-

նորն, ընտանիք ոմանք ալ փութացեր էին ժողովին հասնիլ։ Ազգային երգով մը բացին ժողովը, և Տիար Շիրվանեան (Հնչակեան), կանխաւ հրաւիրեալ լինելով, ատենախօսեց։ Պարոնն ջանաց բացատրել թէ թշնամական և կործանող քննադատութիւնք վնասակար են։ Պատ. Բարակեան և Տիար Նազըճեան եւս հրաւիրուեցան խօսիլ, բայց մերժեցին։ «Հայքի»խմբագիրն յայնժամ հրաւիրուեցաւ խօսիլ, որ ոտքի ելնելով յայտարարեց թէ ինքն ժամանակէ մ'ի վեր ատենախօսելու հրաւէրներն մերժած է, և վստահ չէ թէ ժամանակ է որ խօսի։ Հայր Տէրունեան և Տիար ատենապետն պնդեցին որ խօսի, և խմբագիրն, անպատեհ քննադատութեանց տեղի չտալու համար, յանձն առաւ խօսիլ և խօսեցաւ իբր 35 վայրկեան։ Այդ ատենախօսութեան մէջ խմբագիրն ջանաց բացատրել ներկայ ժամանակի պատմական ահագին նշանակութիւնն Հայաստանի համար, և գործելու, անձնուէր լինելու, հայրենեաց ծառայելու հաղուագիւտ պատեհութիւնն որ կ'ընծայէ ներկայն ամեն Հայու։ Բացատրեց թէ ինչ է թագաւորութեան, իշխանութեան սկզբունքն, և քաղաքացւոց բարոյական զարգացման հիմնական յարաբերութիւնն երկրին կառավարական դրութեանց հետ։ Նըշանակեց համառօտիւ թէ ինչ է անիշխանականութիւն, ի'նչ է ընկերվարականութիւն, ի'նչ է հանրապետութիւն, և ի'նչ է միապետութիւն, և ցուցնելով թէ այդ պէսպէս դրութիւններ որպիսի բարոյական վիճակ կ'ենթադրեն քաղաքացւոց մէջ, պարզեց անիշխանականութեան և ընկերվարականութեան յուէրժական անյարմարութիւնն մարդկային ընկերութեան։ Վերջապէս պնդեց այն կէտի վերայ թէ երկրի մի կառավարութիւնն այնքան աւելի կրնայ մօտենալ հանրապետութեան և ռամկավարութեան որքան աւելի նոյն երկրին հանրութիւնն արդարասէր և ռամիկն կրթեալ և ազնուացած լինի։ Եզրակացութիւնն այն եղաւ թէ ամեն հայ որ Հայաստանի համար բարւոք և ազատ կառավարութեան կը ցանկայ, պարտի ջանալ ինքն լինիլ արդարասէր և օրինասէր։

Ապա համառօտիւ խօսեցաւ Հայր Տէրունեան ճշմարտութեան և անկեղծութեան վերայ, և շեշտեց խմբագրի խօսքերըն։ Մեծ. ատենապետն եւս ժողովրդական լեզուաւ և զուարճալի ոճով շեշտեց արդարասիրութեան սկզբունքն, զոր, ասաց, հալած արճիճի պէս կաթեցոյց մեր գլխու մէջ խմբագիրն և արժան է յուսալ թէ մեր յիշողութեան մէջ ամուր կը մնայ։

ԴԻՒՐՈՒԹԻՒՆ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ

ՄԱՐԴՈՑ ԵՒ ՍՏԱԿԻ

Նաւերու տոմսակ կուտանք դէպ ի Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ամէն կողմ երթալ ուզողներուն։ Մասնաւոր գծեր ունիմք ուղղակի Թուրքիա կամ Ռուսիա տանելու։ Մեծ դիւրութիւն մը կը լինի ճամբորդներուն երբ հոս գիտեն թէ ինչ գծով պիտի ուղեւորին, և տոմսակնին կը գնեն մէկէն, որով թէ' աժան գնով պիտի առնեն և թէ' օտար երկիրներու մէջ տոմսակ գնելու համար միջնորդներու պէտք չունենան և չխաբուին։ Նոյնպէս Եւրոպայէ դէպի հոս եկողներուն եւս մեծ դիւրութիւն է տոմսակը հոս գնել և ղրկել, որ ստակը չկորսուի և չխաբուին ինչպէս շատերուն եղած է։ Ամենէն լաւ գիծը գիտցուած է ՖՐԷՆՉ ԼԱՅՆը որուն վրայ բոլոր ճամբորդներէն գոհունակութիւն լսած ենք։ Նաւերը մեծ և գեղեցիկ են և արագ կ'երթան. լաւ կերակուր և գինի կուտան, և աժան գնով։

Նաև մեր տանց ստակի փոխադրութիւնը տարիներէ հետէ գոհացուցած է բոլոր յաճախորդներն։ Փորձառուներէն հասկցիր ստակդ ձեռքէդ հանելէդ առաջ որպէս զի չխաբուիս, երբ ըսեն թէ ուրիշներէն աժան կուտանք։ Ապահովութիւնը բոլոր շահերուն մեծագոյնն է և շատ տարիներու փորձառութիւնը մեծ ապահովութիւն մ'է։ Ստակ և տոմսակ Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ամէն կողմ ղրկել ուզողներ կամ տեղեկութիւն ուզողներ կրնան դիմել հետեւեալ հասցէին։

Նամակներու պատասխաններ շուտով կը գրուին։

D. M. SHOOSHAN

41 Exchange St., Worcester, Mass.

Մ. Ս. Թ. ՆԱՀԻԳԵԱՆ

ՈՒՍԹԸՐ ՄԱՍ.

Ամերիկայի մէջ 12 տարուան երկար փոռճառութիւն ունենալով ամենայն դիւրութիւն կ'ընծայեմք մեր Հայրենակցացը փոխանակագիր տալու մասին, Թուրքիոյ այլև այլ կողմերը և Եւրոպիոյ բոլոր դլխաւոր քաղաքաց մէջ։ Մեր փոխանակագրերու ապահովութեան մասին Հայրենակիցք արդէն տեղեակ են անցեալ 12 տարուան մեր ընթացքէն։ Նաև նաւու թիքէթ կուտամք ասկէ Եւրոպա կամ Թուրքիա երթալու գոհացուցիչ գներով և գծով, և մասնաւորապէս կը յանձնարարեմք American Line (Ամէրիքըն Լայն) կոչուած գիծն, որ կը պարունակէ ՍԻԹի ՕՎ ՓԱՐԻԶ և ՍԻԹի ՕՎ ՆԻՈՒ ԵՈՐՔ կոչուած ամենապատուական և ամենաարագ նաւերը, որ ամեն չորեքշաբթի ժամ 11ին ճամբայ կելնեն Նիու Եորքէն։

Աստուածաշունչ (աշխարհաբար) այլև այլ մեծութեամբ և Աւետարան, և այլ կրօնական գրեանք կը վաճառեմք գրեթէ կ. Պոլսոյ մէջ ծախուած գներովն, նաև գիտական և պատմական ուէ գիրք կրնամք շատ կարճ ժամանակի մէջ բերել տալ եթէ հրաման ընդունիմք։

Ամեն նամակներու մեր անմիջական ուշադրութիւնը կուտամք ինչպէս սովորութիւն է։ Մեր հասցէն— M. S. T. NAHIGIAN

P. O. B. 478, Worcester, Mass.

Ահա դերձակ մի որ ամեն տեսակ զգեստուց պատուականն կը շինէ խիստ էժան գնով, ինչպէս որ մեր Հայերէն ոմանք փորձով տեսած և զարմացած են։ Նիւթերն ընտիր են և ձևերն վայելուչ։ Փորձեցէք և տեսէք

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9դ Փողոց

Պրոսուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անունն ալ Հայերէն գրելով։ Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր։



191 FRONT Փողոց, Worcester, MASS.

Ստեփան Փ. Բրուտեանս, պատիւ ունիմ ծանուցանելու իմին ազգայիններուս թէ առանձինն խանութ մ'ունեցած եմ քանի մը շաբաթներէ ի վեր և կը պահեմ ամեն տեսակ ժամացոյցներ զուտ ոսկի, ոսկեզօծ և արծաթ. Նաև ամեն տեսակ ոսկեզօծ շղթաներ և ոսկի մատանիներ և որ ըստ կարգին. Նաև ամեն կարգի խուշար ժամացոյցներ թէ պատի և թէ բաֆիյարմար մօտս կը գտնուին, և կը վստահացուցնեմ թէ խիստ չափաւոր գներով կըրնամ վաճառել։ Ազգայնոցս մասնաւոր զեղչ կ'ընեմ որևէ ապրանքս համար որք մօտս կը գտնուին.

Նաև ամեն տեսակ ժամացոյցներ թէ ամերիկական և թէ եւրոպական կը նորոգեմ խիստ չափաւոր գներով և լաւագոյն կերպով և կերաշխաւորեմ մէկ տարի։

ՍՏԵՓԱՆ Փ. ԲՐՈՒՏԵԱՆ

ՅԱԿՈԲ ԵՒ ԿԱՐԱՊԵՏ ԵՂԲԱՐՔ

Յ. ԷՔԻԶԵԱՆ

EKIZIAN BROTHGRS

30 Eddy St. Providence R. I.

Անցեալ տարուան Միացեալ Նահանգաց դէպի Եւրոպա մեր ունեցած ստակի փոխադրութեան համեմատութիւնն արդիւնաւոր ըլլալուն՝ ներկայիս կը խոստանամք որ ա՛լ աւելի գոհացութիւններ անեմք։

Անոնք որ կը կարօտին ստակի փոխադրութիւններ անել դէպի Եւրոպա կամ Թուրքիոյ կողմերն, ամեն մէկ քաղաքի իրենց համեմատութեամբն կարգադրած ենք որ թէ մեր անձնական տուներու և թէ մասնաւոր գործակատարներու ընդունելութեան պայմանաւ փոխանակագրեր պիտի ծախենք գոհացուցիչ գներով։

Այս նկատմամբ մեր հայցէին գրուած նամակներու մասնաւոր ուշադրութիւն անելով անմիջապէս պիտի պատասխանենք։

ԴԱՆԻԷԼ ՏԷՕՐՄԷՃԵԱՆ

Ցանձնակատար-գործակալ

ամեն տեսակ

Գրական և տպագրական արտադրութեանց

և ևն. ևն.

Հաստատեալ 1890 ի Ռուսճուք

FRANCOIS FRENTZ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՂԱԳՈՐԾ

311 SEVENTH AVE. NEW YORK

27դ և 28դ փողոցաց միջև

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ Էվինիու Նիւ Եորք

26դ և 27դ Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ